ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«23» փետրվար 2018 թվականի № 27-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 120 և 2017 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 2454 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ Ֆ-302/17 գրությունը, «Փերֆեքտ Սթոուն» ՍՊ ընկերության 2017 թվականի հոկտեմբերի 02-ի թիվ 01/10 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՓԵՐՖԵՔՏ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/578 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Կարմրաշեն-Մաստարայի տուֆի հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասը՝ 1.X=4459720.1 Y=8402516.1, 2. X=4459896.1 Y=8402474.3, 3. X=4459916.4 Y=8402473,6, 4.X=4460076.3 Y=8402648.4, 5.X=4460048.9 Y=8402729.5, 6.X=4459862.8 Y=8402811.3 (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային

համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանման աշխատանքներ կատարելու համար, հատկացնելով՝ 7,0 հա և լեռնահատկացման թիվ Լ-578 ակտը՝ 1.X=4459720.1 Y=8402516.1 H=1055 (h=0), 2.X=4459896.1 Y=8402474.3 H=1055 (h=0), 3.X=4459916.4 Y=8402473.6 H=1060 (h=0), 4.X=4460082.2 Y=8402647.2 H=1073 (h=-8), 5.X=4460052.4 Y=8402730.5 H=1073,5 (h=-8,5), 6.X=4459862.6 Y=8402811.4 H=1061,0 (h=-6,0), 7.X=4459851.6 Y=8402788.7 H=1059,5 (h=0), 8.X=4459822.0 Y=8402804.7 H=1059,0 (h=0), 9.X=4459742.5 Y=8402642.1 H=1057,0 (h=0), 10.X=4459712.9 Y=8402666.6 H=1057,0 (h=0), 11.X=4459700.9 Y=8402658.5 H=1057,0 (h=0), 12.X=4459714.1 Y=8402637.8 H=1057,0 (h=0), 13.X=4459734.7 Y=8402624.6 H=1057,0 (h=0), 14.X=4459690.3 Y=8402535.1 H=1057,0 (h=0) (տրված են՝ WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 8,3 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 7700 մ^3 տուֆի պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -578 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Կարմրաշեն-Մաստարայի տուֆի հանքավայրի հյուսիս-արևելյան տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ- 578 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ